

„Горький и литература народов Советского Союза“. Редакционная коллегия: А. А. Петросян, К. В. Айвэзьян, Л. Н. Арутюнов. Издательство Ереванского гос. университета, Ереван, 1970, 626 стр., цена 2 руб. 20 коп.

«Գորկին և Սովետական Միության ժողովուրդների գրականությունը»: Խմբագրական կոլեգիա՝ Ա. Ա. Պետրոսյան, Գ. Վ. Այվազյան, Լ. Ն. Արուտյունով: Երևանի պետական լսարանի հրատարակչություն, Երևան, 1970, 626 էջ, գինը՝ 2 ռ. 20 կոպ.:

1968 թ. մեր երկիրը և ամբողջ աշխարհի առաջագիմ մարդկությունը տոնեցին մի նշանավոր տարեթիվ՝ Ա. Մ. Գորկու ծննդյան 100-ամյակը: Խոսքի մեծ վարպետի հորելյանը նշանավորվեց գրականագիտական մտքի արտակարգ աշխուժացումով: Ասպարեզ եկան շատ նոր գրքեր, ժողովածուներ, հրատարակվեցին մեծ քանակությամբ հոդվածներ, նոր նյութեր Գորկու ժառանգությունից: Ուսումնական հաստատություններում, գիտահետազոտական ինստիտուտներում, ստեղծագործական միություններում տեղի ունեցան գրողի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված գիտական կոնֆերանսներ:

Այստեղ մենք ուզում ենք քննարկել «Գորկին և Սովետական Միության ժողովուրդների գրականությունը» թեմայի լուսաբանման ուղղությամբ գրականագետների կատարած կոլեկտիվ աշխատանքի արդյունքները՝ համանուն ժողովածուի լույս ընծայման կապակցությամբ: Ժողովածուն կազմվել է 1968 թ. գարնանը Երևանում կայացած գիտական նստաշրջանի նյութերի հիման վրա: Նստաշրջանը կազմակերպել էին Երևանի պետական համալսարանը, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի լեզվի և գրականության բաժանմունքը, ՍՍՀՄ ԳԱ Մ. Գորկու անվ. համաշխարհային գրականության ինստիտուտը և Հայկական ՍՍՀ ԳԱ հասարակագիտական բաժանմունքը:

Սովետական բազմազգ գրականության հետ Գորկու ունեցած կապերի ստեղծագործական ուսումնասիրման տեսակետից գրախոսվող ժողովածուն գորկիագիտության և սովետական գրականագիտության խոշոր նվաճումներից մեկն է: Այն ներկայացնում է Մոսկվայի, Հայաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, Բելոռուսիայի, Մոլդովիայի, Ադրբեջանի, Ղազախստանի, Կիրգիզիայի, Կարադինա-Բալկարիայի, Աբխազիայի, Դաղստանի, Թաթարստանի, Ուզբեկստանի, Նախախաչի,

Չուվաշիայի, Տուվայի, Կալմիկիայի, Օսեթիայի, Ջեչենա-Ինգուշեթիայի, Կարաչաևա-Չերքեզիայի, Բուրյաթիայի, Կոմիի, Բաշկիրիայի, Ալթայի գիտնականների հոդվածները, թվով 50 հատ:

Ժողովածուի մեծ արժանիքներից մեկն այն է, որ Գորկու ստեղծագործության առնչությամբ առաջադրվում և քննարկվում են տարբեր ժողովուրդների գրականության, ավանդույթների փոխներգործությունն ու փոխադարձ կապերը, ազգային և ինտերնացիոնալիստականի միասնությունը, երիտասարդ գրականությունների զարգացումը և այլն:

Գիրքը բաղկացած է չորս բաժնից: Առաջին բաժինը կազմում են ընդհանուր տեսակաբնույթի հոդվածները: Երկրորդը նվիրված է Գորկու ստեղծագործության և ազգային գրականությունների փոխազդեցության հարցերին՝ Նախահնդկաստանի շրջանում: Երրորդն ընդգրկում է սովետական շրջանը: Վերջին բաժնում ներկայացված են հոդվածներ Գորկու խմբագրական-հրատարակչական գործունեության և նրա ստեղծագործությունների թարգմանությունների մասին:

Իր ողջ կյանքում Մ. Գորկին պայքարել է հանուն տարբեր ժողովուրդների մշակույթների սերտ միասնության, մերձեցման և փոխադարձ հարստացման, նրա կենսահաստատ ավանդույթները անշնչելի հետք են թողել մեր բազմազգ գրականության պատմության մեջ, նրա ստեղծագործությունները տասնամյակներ շարունակ մեծ ազդեցություն են ունեցել և շարունակում են ունենալ սովետական գրականության վրա:

Գորկին, որպես հեղափոխական գրող, «XX դարի գեղարվեստական կյանքի հիմնական պորբլեմատիկան ներկայացրել է առավել լիակատար և համակողմանիորեն, քան որևէ մեկ ուրիշը»: Զարգացնելով այս միտքը Վ. Եշերթեևան ցույց է տալիս, որ «Գորկու ստեղծագործության մեջ ամենից ավելի խոսքով և կերպով

արտահայտված ամենակական նոր օրինաչափությունը դա արվեստի ներգործուն վերափոխի միսիայի աճն է. Գորկու առանձնահատուկ պատմական նշանակալիությունն այն է, որ նրա ստեղծագործական կերպարի մեջ առավել լիակատար է մարմնավորված հեղափոխության ստեղծարար էությունը:

Գորկու ստեղծագործության ամենակարևոր և էական գիծը գեղարվեստական մտածողության ձևավորումն է նոր օրենքներով, սոցիալիզմի օրենքներով: Այս միտքը կարմիր թելի նման անցնում է ողջ գրքի միջով, ելակետ ծառայելով սովետական գրականության վրա գրողի ստեղծագործության ունեցած ազդեցության վերլուծության ժամանակ: Ժողովածուում առաջին հերթին քննության է առնվում Գորկու ստեղծագործական գաղափարների նշանակությունը, գլխավոր, հանգուցային հարցերում նրա ստեղծագործության և գեղագիտության ունեցած ազդեցությունը: Գորկու փորձի նշանակությունը բացահայտվում է նրա հեղափոխական նորարարության լույսի տակ, նորարարություն, որն ընդլայնում է կյանքի ճանաչողության սահմանները և հնարավորությունները, միջոցներ ընդձևում նրա բազմակողմանի և գեղարվեստական ճշմարտացի բնորոշման համար: Այս հանգամանքն է, որ ընդգծվում է Գ. Լոմիձեի, Մ. Պարխոմենկոյի, Զ. Կեդրինայի, Լ. Հարությունովի, Ն. Կրուտիկովայի և այլոց հոդվածներում:

Այս տեսակետից մեթոդաբանական կարևոր նշանակություն ունի Լ. Հարությունովի հոդվածը: Անդրադառնալով ազգային գրականությունների վրա Գորկու ունեցած ազդեցությանը, նա զգուշացնում է խուսափել այդ հետաքրքիր և բարդ հարցի միակողմանի ուսումնասիրությունից և պահանջում է այդ խնդիրը քննել գրականության զարգացման ընդհանուր օրինաչափությունների լույսի տակ: Ազդեցություններն պրոբլեմն այստեղ տեսական և մեթոդաբանական խոր հիմնավորում է ստանում: Հիմնաքար են դառնում նախ՝ տիպաբանական հարաբերակցությունը և երկրորդ՝ պատմական մոտեցումը տվյալ խնդրին: Մասնավորապես Լ. Հարությունովը, — ամենևին էլ չի կանխորոշում մեծ սկզբնաղբյուրից կախում ունենալը, բայց ցույց է տալիս գրականությունների զարգացման նույնանման գծերը: Չէ որ անմիջական ազդեցությունն անդամ պատահական չի լինում: Նա լուրջ ցույց է տալիս, որ գեղարվեստականության, գաղափարների, պրոբլեմների տվյալ տիպի ընկալման համար պարարտ հող կա: Միայնակալ մոտեցումն օգնում է ոչ միայն տիպաբանորեն նման երևույթների, այլև տվյալ ազգային մշակույթի մեջ նրանց առաջացման օրինաչափության բացա-

հայտմանն ու դասակարգմանը: Այս առումով ազդեցությունների պրոբլեմը ներկայանում է որպես ազգային գրականության ինքնուրույն էվոլյուցիայի օրինաչափ հետևանք, գրականություն, որը իր զարգացման ընթացքում յուրացնում է նոր գեղարվեստականություն, որը մյուս գրականությունները, այս կամ այն պատճառով, ավելի շուտ են յուրացրել:

Գրականությունների փոխազդեցության և փոխադարձ կապի, դասականների փորձի, մասնավորապես Գորկու ավանդույթների ստեղծագործական յուրացման նկատմամբ այսպիսի մոտեցման դեպքում ազդեցությունը չի հարվածում արվեստի ներքին էությանը, ազգային ինքնատիպությանն ու ինքնուրույնությանը: Քննելով Գորկու զարգացող ունակիզմի և ազգային գեղարվեստական գիտակցության հարաբերակցությունը, քննադատը մանրամասնորեն կանգ է առնում մի շարք հարցերի վրա և լուծում դրանք պատմագրական հարուստ նյութի հիման վրա: Ուշադրության արժանի են երկու հարյուրամյակների սահմանազխին՝ քննադատական ռեալիզմի տրանսֆորմացիայի (Շիրվանզադեի «Քաոս» և Գորկու «Յոժմա Գորդեկ» և «Արտամոռնիների գործը» վեպերի օրինակով), սոցիալիստական ռեալիզմի ձևավորման գործում ուսմանտիզմի դերի (Ռայնիսի, Հակոբյանի, Չարենցի պոեզիայի առնչությամբ), լուսավորական ռեալիզմի և սոցիալիստական ռեալիզմի փոխհարաբերության հարցերը: Այստեղ մենք տեսնում ենք, թե ինչ դեր է խաղացել շարադրման նոր, գորկիական եղանակը այն գրականությունների համար, որոնք սոցիալական վեպի անհրաժեշտ փորձ չունեին: Հետաքրքիր են Լ. Հարությունովի դիտողությունները երիտասարդ գրականությունների մեջ նոր մարդու ձևավորման թեմայի մարմնավորման մասին:

Ս. Իսակովի, Մ. Դադաշզադեի, Ծ. Շարլիովսկու, Մ. Պրիդորի, Գ. Ցիցիշվիլու, Ա. Ռաձյավիչյուսի, Մ. Յարոշի, Վ. Վավերեի հոդվածներում քննարկվում են Գորկու կապերը էստոնիայի, Ադրբեջանի, Ուկրաինայի, Վրաստանի, Լիտվայի, Բելուսիայի, Լատվիայի գրական կյանքի և գրողների հետ: Բոլոր այս գործերը չէ, որ անվիճելի են, ինչպես, օրինակ, Ա. Ռաձյավիչյուսի «Մ. Գորկին և մարդու կոնցեպցիան ժամանակակից լիտվական գրականության մեջ» հոդվածը: Բայց դրանք հարուստ և արժեքավոր, շատ անգամ քիչ հայտնի, հաճախ էլ բոլորովին նոր նյութեր են պարունակում, որոնք ուսուցիչ են առաջին անգամ են հրապարակվում և ունեն ոչ միայն ճանաչողական, այլև գիտական նշանակություն, քանի որ լրացնում են ուսուցիչական մեջ Մ. Գորկու կյանքի և ստեղծագործության մասին եղած լայնորեն հայտնի կար-

ծիրները, որոնք վերստին հավաքված և ներկայացված են գրողի երկերի լիակատար, ակադեմիական ժողովածուի նորերս լույս տեսած հատորներում: Այսպես, խիստ ուշագրավ են տեղեկությունները բուրժուական էստոնիայում Գորկու երկերի տարածման և հատկապես «Հատակում» պիեսի թարգմանության և ընկալման (Ս. Իսակովի հոդվածը), XX դարի սկզբի վոաց մարքսիստական քննադատության ներկայացուցիչներ Ի. Գամարտելու, Շիո Զիթաձեի և մյուսների կողմից Գորկու ստեղծագործության գնահատման (Գ. Ցիցիշվիլու հոդվածը), ինչպես նաև հայ մարքսիստական քննադատության կողմից գրողի ստեղծագործությունների մասսայականացման մասին: Այս հոդվածի հեղինակ Ա. Ոսկերչյանը իրավացիորեն ընդգծում է, որ բուլշևիկ քննադատներ և հրապարակախոսներ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Հ. Հակոբյանի, Ալ. Մյասնիկյանի, Ա. Մռավյանի, Ս. Խանոյանի, Ա. Կարինյանի Գորկուն նվիրված հոդվածները պատահական երևույթ չէին, այլ արտացոլում էին պրոլետարական մեծ գրողի ըստեղծագործության և քաղաքական գործունեության նկատմամբ լենինի ունեցած վերաբերմունքը:

Ուշադրության արժանի են Ս. Հախումյանի հոդվածը՝ նվիրված Գորկու խմբագրությամբ «Հայ գրականության ժողովածու» լույս ընծայելու պատմությանը, նախասովետական հայ թատրոնում Գորկու պիեսների բեմադրության վերաբերյալ Ս. Ռիզակի հոդվածը, և Գ. Անմեղիկյանի հոդվածը, որի թեման է՝ «Ե. Զարենցը որպես Գորկու երկերի թարգմանիչ»: Հայ գրականության մեջ «Մրկահավի երգը» ստեղծագործության դերի և տեղի հարցի հետաքրքիր վերլուծություն կա Ս. Ալեքսանյանի հոդվածում: Մի շարք նոր տեղեկություններ կան Վ. Պիրադովի հոդվածում, որը պատմում է Մ. Գորկու և է. Նինոշվիլու ծանոթության մասին:

Առանձնապես արդիական են Մ. Գորկու ստեղծագործական ավանդույթներին, սովետական գրականության զարգացման գործում նրա կատարած դերին վերաբերող հոդվածները: Դերանցից իր խորությամբ աչքի է ընկնում Վ. Բելյակի հոդվածը, ուր քննարկվում է այն հարցը, թե ժամանակակից ուկրաինական արձակն ինչ ինքնատիպ եղանակով է յուրացնում Գորկու ավանդույթները:

Միանգամայն խրախուսելի է Ղ. Այվազյանի ձգտումը՝ օբյեկտիվորեն պարզաբանել Ռ. Գորկու և Ա. Խալաթովի փոխհարաբերությունները: Ղ. Այվազյանը համոզիչ կերպով հերքում է գորկիագիտության մեջ մինչ այժմ եղած կարծիքը և ցույց տալիս, թե ինչ դեր է կատարել Ա. Բ. Խալաթովը սովետական գրականության և

հատկապես հրատարակչական գործի զարգացման մեջ և ինչքան բարձր է գնահատել նրան Մ. Գորկին:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն նյութերը, որոնք պատմում են երիտասարդ գրականությունների ձևավորման գործում Գորկու ունեցած դերի մասին: Գրքում զետեղված հոդվածներում լուսաբանվում են Գորկու կապերը ղաղստանյան, կաբարդինա-բալկարյան, չեչենական, ինգուշական, օսեթական, աբխազական, թաթարական, բաշկիրական, ղաղախական, ուգմուրտական, շուվաշական, բուրյաթական, տուվայական, խակասական, կոմի, ալթայան գրականությունների հետ: Այդ հոդվածներում քննվում են նաև գրական ստեղծագործության մեջ ժողովրդական բանահյուսության օգտագործման, ռեալիզմի և ռոմանտիզմի փոխհարաբերության հետ կապված մի շարք հարցեր:

Այսպիսով, ՍՍՀՄ ժողովուրդների գրականության ճակատագրում Գորկու նորարարական ռեալիզմի ունեցած դերի լուսաբանությունն ու ուսումնասիրությունն այս գրքում արդյունավետ կերպով զուգորդվում են արվեստի մեջ ազգային և համազգային մի շարք խնդիրների առաջադրման և լուծման հետ:

Ինչ խոսք, որ գրքում կան նաև թերություններ: Թեմաների բազմազանությունը, ընդգրկված նյութի ընդարձակությունն անխուսափելիորեն հանգեցրել են որոշ նկարագրականության, դեկլարատիվության: Մի քանի հոդվածներում կան և անհշտություններ, անհաջող ձևակերպումներ: Բայց դա բոլորովին էլ չի նսեմացնում գրքի արժանիքները, նրա նշանակությունը:

Կուզենայինք նշել տարբեր ժողովուրդների միջև եղած գիտական կապերի աճը և այն մեծ աշխատանքը, որ կատարեց Երևանի համալսարանի գրական կապերի ամբիոնը Ղ. Վ. Այվազյանի զլխավորությամբ (որը Մ. Գորկու հոբելյանի առթիվ լույս ընծայեց նաև «Գորկին և Հայաստանը» գիրքը), ինչպես նաև Ա. Ա. Պետրոսյանի զլխավորած խմբագրական կոլեգիան:

Գրքի համար գրված իր ներածական խոսքում Հայաստանի կոմունիստական կուսակցության կի բարտուղար Ռ. Հ. Խաչատրյանը ընդգծում է. «Գորկին բարձր էր գնահատում և խորն էր գիտակցում սովետական ժողովուրդների բարեկամությունը»: Եվ այս ժողովածուն, Ռ. Խաչատրյանի բառերով ասած, «այդ մեծ և անխախտ բարեկամության հիանալի արտահայտություններին» մեկն է: Հավատարիմ լինել Գորկու ավանդներին, — գրում է նա, — նշանակում է հավատարիմ լինել այդ բարեկամությանը:

Ի. ՎԱՅՆՔԵՐԳ
(Մոսկվա)